

որը կամք է ձեռս այլադեպացն ի ծառայութիւն եւ ի նեղութեան, ո՛հ: Արդ որք ճաշակեցէք յաստուածային բուրաստանէ եւ յամենայն սեղանոյս եւ որք հանդիպէք Ս. Աւետարանիս տեսութեամբ կամ ընթերցմամբ, աղաչեմք զձեզ յիշեցէք ի սուրբ աղօթք ձեր... (նոյնութեամբ քանիցս կը կրկնուին վերի անունները Բ, էջ 531) եւ որք հանդիպէք այս սուրբ աւետարանիս յիշեցէք ի մաքրափայլ յաղօթք ձեր եւ լիակատար բերանով եւ ուղիղ սրտիւ եւ ամբողջ խորհրդով Աստուած ողորմի ասացէք Գրիգոր սուտանուն քահանայի եւ ծաղկողի եւ կազմողի եւ ծնողաց իմաց Ստեփանոս քահանայի եւ Մինայ խաթունի եւ այլ ամենայն աղօթանայն կենդանեաց եւ հանգուցելոց եւ որք զԱստուած ողորմին ասէ իւրն ողորմի Քրիստոս Աստուած. ամէն: Այլ եւ զիս զանաբժան սուտանուն Գրիգոր քահանայ որ զանունն ունիմ եւ գործս ոչ, որ ծաղկեցի եւ կազմեցի զսա ի դառն եւ ի կսկծալի ժամանակիս, յորում գնաց Ձհանշայն ի վերայ Ամբայ եւ կոտորեցաւ եւ այն անիծեալ Խոսիւն շէնն երեկ եւ թալան արար զերկիրս Ռշտունեաց, յաւուր տօնի Ծննդեանն Քրիստոսի, զոր ասէ աւետարանն եթէ արթուն կացէք եւ յամենայն ժամ աղօթք արարէք զի մի լիցի փախուստն ձեր ի ձմերանի եւ մի յաւուր շաբաթու: Զոր եղեւ վասն ծովացեալ մեղաց մերոց, եւ մեք փախուցեալ դառն սրտիւք եւ լալոտ աչօք, ձիւնաթաթախ եւ տառապանօք անկեալք ի յօտար երկիր ի տեղիս տեղիս: Այսպիսի կակիժ յայտմ ամի պատահեցաւ ազգիս հայոց եւ խափանեցան եկեղեցիք եւ վանորայք ի յաղօթից եւ ի պատարագաց: Զայսմ չար ժամանակիս ստացաւ զՍ. Աւետարանս Յովանէս քահանայ բարի յիշատակ հոգո իւրո եւ ծնողաց իւր որ եւ ի վայելումն որդոյ իւրոյ Սարգիս քահանային եւ իւր զաւակացն զի Տէր Աստուած պահեցէ զսոսայն ընդ երկայն ամօք առողջ մարմնով եւ արդար հոգով մինչեւ ի խորին ծերութիւն պահեցէ Տէր Աստուած հոգով եւ ուրախ սրտով, զկորին յղարկէ հոյով, որ ծաղկողն ուտէ շուտով, ի գարուն ելնէ բարով, թախած ինք ումէկ չուխով, քաղցած ենք ումէկ հացով, այս երթայր շէմնալով, Աստուած, ողորմեայ մեզ խիստ շուտով, կարդացողացդ եւ լսողացդ ողորմի Քրիստոս Աստուած ողորմութեամբ ամէն. նորոգեցաւ սայ ի դառն ի վշտալից ժամանակին ի թուականութեան հայոց ի ԶԺԸ ի գեւղս որ կոչի Տայշող, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին եւ Ս. Ստեփաննոսի նախավկային, զի պահեցէ զձեզ Աստուած հոգին. ամէն:

(էջ 533). Գարձեալ եւ Գրիգոր վարդապետս յերեսս անկեալ աղաչեմք զամենեւեանս որք հանդիպէք այս Ս. Աւետարանիս, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթք ձեր եւ լիակատար բերանով եւ ուղիղ սրտիւ եւ ամբողջ խորհրդով Աստուած ողորմի ասացէք յետնամայ տիրոջ Ս. Աւետարանիս եւ յիշեալ Տէր ի քում արքայութեանդ զՄուրատն, եւ զկողակիցն իւր յսումարն եւ զորդիքն իւր զԱւետիսն եւ զխաթունն եւ զկողակիցքն իւրեանց զԱյսլի Փաշէն եւ զխաթունն: Գարձեալ յիշեալ կրկին անգամ ով քահանայք ի մաքրափայլ յա-

ղօթք ձեր զԱւետիսն եւ զկողակից իւր զԱյսլի Փաշէն եւ զորդին զԿարապետն եւ զկողակիցն զԳողաղէն եւ զորդին զԱւետիսն եւ զմիւս որդին զՄուրատն եւ զկողակիցն զԳողաղէն եւ զԱւետիսի եղբայրն զԽաթունն եւ զկողակիցն իւր խաթունն եւ զորդին զԱստուածատուրն եւ զբլերքն իւր զԳաւլուսն եւ զայրն իւր զԱղաջայն եւ զորդին իւր զԽաթունն, զՆստէֆն եւ զայրն իւր զՏ. Աւագն եւ զորդին զՍահակն: Զխոնձէն եւ զայրն իւր զԽաթունն եւ զորդին իւր զՈվանէսն եւ զՄարտին, զՏօբէրն զՍօլթանն եւ զայրն իւր զԳուլակին եւ զորդին զԳաղաղան, զՀանգաղէն, զորդին իւր զԳարմանն եւ Աստուած ողորմի ասացէք սոցա Աստուած ձեզ ողորմեացի ամէն:

Արտաին աղաչեմք զձեզ ով քահանայք հարբ եւ եղբարք յիշեցէք ի յաղօթք ձեր Գրիգոր վարդապետ որ վերստին նորոգեաց զՍ. Աւետարանս ի դառն ժամանակիս, որ նուազեալ են ազգս հայոց ի յանօրինաց որ ասէ աւետարանն ի բազմախալոյ անօրինաց ցամաքացի սէրն բազմաց: Կազմեցաւ ի յերկիրս Ռշտունեաց ի հռչակաւոր տեղւոյն որ կոչի Նարեկ, ընդ հովանեաւ Ս. Գրիգոր վարդապետի զերեզմանին եւ Ս. Սանդուխտին եւ ի թեմակալութեան Հայոց տէր Գրիգոր Կաթողիկոսին եւ ի յառաջնորդութեան Տ. Ղազար Կաթողիկոսին, որ հուրընկալութիւն արար որ կապեցի = կապեցաւ ձեռամբ Գրիգոր վարդապետին ի վայր կայր ժամանակիս ի թուականին Հայոց ի ՌԱԶ ամին: Փափաքեցան բարեալիկնքն որ են այրիք որ նորոգել տուին զՍ. Աւետարանս ի հալալ եւ յարգար վաստակոյ իւրեանցն իւրեանց հոգոյն եւ որդւոց իւրոցն եւ են անուանեցաւ սոցա Այսլի փաշա եւ խաթունն Աստուած ողորմի ասացէք Աստուած ձեզ ողորմի ամէն: Գարձեալ յիշեցէք զՍիտիսն, զԽաթունն զկողակիցք սոցա, զԽաթունն եւ զԱյսլի փաշան, զորդիքն զԿարապետն, զՄուրատն, զորդին զՍիտիսն զԱստուածատուրն, Աստուած ողորմի ասացէք, Աստուած ձեզ ողորմի ամէն ամէն եւ եղիցի »:

32.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

1477:

ԹՈՒՂԹԸ 288 (էջ 576): — ՄԻԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ 26×18×7 մմ.: — ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿԻՍԻՆ: — ՏՈՂԹԸ մէն մի սիւնակը 19 տողք: — ՆՈՒԹԸ ԹՈՂԹ: — ԿԱԶՄԸ կաշեպատ փայտ: — ՀԱՆԳԱՄԱՆԸ բաւական լաւ: — ՄԱՅԱԿԱՆԵՆՆԵՐ ՊԱՅՊԱՆԱՅ սկիզբն ու վերջն երկերկու թերթ, ծառցիկ կտոր, առաջինին վրայ կը կարդացուի Եզեւէ, 7-9, Ա. ՏԻՍԻԹ. Գ. 14-16, Ելից. ա. 1-7 հատուածները եւ ծառցական անընթեռնելի հրահանգ մը, իսկ երկրորդին վրայ Դան. Է, 9-24 հատուածը. ամէնքն ալ ընտիր մետրոպոլիտ միջակ երկաթագիր: — ՂԵՐՆԱԳԻՐԸ չկան: — ԳԻՐԸ խոշոր բոլորգիր: — ՍԿԶՐՆԱՏԱՐԸ Աւետարաններունը նկարէն խորհրդատառեր, Գլուխներունը՝ արգլարդագրեր, տուններունը՝ կարմիր երկաթագիր: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԳՆԵՐ նկարէն պարզ գաւթ դաժներ: — ՄԱՆՐԱՆԿԱՐԸ չկան: — ԽՈՐԱՆԸ սկիզբը

աւրհնեալ յաւիտեանս ամէն: Գարձեալ աղաչեմ յիշատակել յաղաւթս ձեր զՅովհաննէս քահանայ զի աշխատեցաւ ի կոկել թխդին եւ Աստուած ողորմի ասել նմա, եւ ծնողացն իւրոց. ամէն: Գարձեալ աղաչեմ յիշեցէք ի Քրիստոս զհաւրեղայր որդին իմ զԽաւճա Յովաննէսն եւ զծնաւզան իւր, եւ զկողակիցն իւր զՍուլթանն եւ զորդին զՄելքոն՝ զՇաղաթն՝ զԹաղղի վերին՝ զԱղաչան եւ զգուստրն՝ զԽանուսն եւ զՄելքոնէ կողակիցն զԹուրանդին, եւ զորդին, զԹարխան եւ զայլ ամենայն Պերձաւորքն զկենդանիքն եւ զհաւրեղեցեալքն ի Քրիստոս յիշեցէք ի Քրիստոս. աստուած ողորմի ասացէք եւ Աստուած ձեզ ողորմեսցի ի յիւր միւսանգամ գալստեան ամէն: — Գարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զԽաւճայ Մելքոն եւ զԽաւճայ Մուրադն, որ հրով այրեցին, որպէս զառաջին մարտիրոսքն եւ զԽաւճայ Յովհաննէսն եւ զՈվսէփն զՄելքոնէ որդիքն եւ զԽանուսն եւ զգուստր իւր զԽանախաթուսն եւ լի բերանով Աստուած ողորմի ասացէք նորա ամէն, եւ Աստուած ձեզ ողորմի յետ միւսանգամ գալուստն. ամէն: Գարձեալ աղաչեմ ձեզ զվերջին կազմող սորայ յիշեցէք ի Քրիստոս զսուտանուն Հերապետն. ամէն. Հայր մեր: Գարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զԽոճա Մելքոնն եւ զորդիքն իւր զԽոճա Յովաննէս եւ զՈվսէփն որ վերջին ետուն նորոգել զսուրբ աւետարանս յիշատակ իւրն եւ ծնաւդաց իւրոց ամէն: Հայր մեր որ յերկինս:

Բ. (186). «ԶԽաւճա Յովսէփ եւ զծնաւզան նորա աղաչեմ յիշատակել յաղաւթս ձեր ի ժամ սոսկալի սուրբ պատարագին եւ աստուած ողորմի ասել հոգւոյն նոցա եւ մեղաց թողութիւն հայցել նորա ի բարերարէն Աստուծոյ: Մանաւանդ եւ առաւել զուգակցի նորին պարոն Յովսէփին խաթուն Գուլիզարին եւ մաւր Գուլիզարին, Գուհար Մելիքին, եւ ամենայն արեան առու ազգականաց Խաւճա Յովսէփին ունելով զսուրբ աւետարանս միջնորդ եւ անբարբառ բարեխաւս առ միածին որդին Աստուծոյ եւ յիշատակ անջինջ հոգւոյ իւրոյ ի սուրբ եկեղեցի. ԶԻԸ. գրեցաւ ի ժամանակս Պօղոս վարդապետին:

Գ. (299բ). «Գարձեալ աղաչեմ զհանգիստողք սուրբ աւետարանիս, յիշատակել յաղաւթս ձեր զԽաւճայ Յովհաննէսն եւ զծնաւզան իւր զՄելքոն զորդի խոճա Յովսէփին եւ Աստուած ողորմի ասել սոցա եւ մեղաց թողութիւն եւ արաքայութիւն խորթել ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ: Եւ ինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ առաւն է ի տուրս պարգեւացն մեզ յիշեցելոցս եւ ձեզ յիշողացդ առհասարակ ողորմեսցի ի միւսանգամ գալստեան իւրում ամէն: Գրեցաւ գիրս ի թվին Հայոց ԶԼԵ. ի յԱրաց ամսոյ ԻԹ. յաւուր շաբաթուոյ:

Դ. (187). «Զվերջին ստացող զարդարեալ սուրբ աւետարանիս զԽոճա Յովհաննէսն եւ զծնաւզան իւր զՄուրադն եւ զՄայրամն եւ զկողակիցն իւր զՍուլթանն եւ զգեռաբուն տղաքն զԽաղուկն զՊապուկն եւ զՍաւարն եւ զՀորմատն եւ Սրայհաս, աղջիկն զԽանգատան, զկենդանիս եւ զհանգուցեալս ի Քրիստոս Աստուած: Արդ աղաչեմ ձեզ

ով եղբարք որ հանդիպիք այս սուրբ աւետարանիս կարգալով կամ աւրինակելով յիշեալէք ի սուրբ աղաւթս ձեր զԽոճայ Յովհաննէսն որ գնեց զսոյ ի հալալ եւ ի արդար ընչից իւրոց: Գարձեալ աղաչեմ ձեզ ով քահանայք յիշեալէք ի սուրբ աղաւթս ձեր զԽոճայ Յովհաննէսն որ ետ զարդարել սուրբ աւետարանիս տուփն արծաթիւ եւ Աստուած ձեզ յիշէ յիւր սուրբ արքայութեանն ամէն:

34.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

1487.

ԹՈՒՂԹՔ 369 (էջ 738): — Մեծօրհնոյն՝ 18×14×8 մմտ: — Գրողութիւն՝ երկսիւն: — ՏՈՂՔ՝ մէս սիւնով 17 տողք: — Նիւթ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ խոնաւութենէ վնասուած եւ կարմրոտած: — ՄԱԳԱՂԱԾԵԱՅ ՊԱՇՊԱՆԱԿ՝ սկիզբն ու վերջն երկերկու թերթ. մնարդական երկաթագրով աւետարան: — ՎԵՐԱԳԻՐՔ՝ ԶԿԱՆ: — ԳԻՐ՝ բոլորգիր ՍԿԶՐՆԱՏԱՌՔ ԵՆ ԼՈՒՍԱՆՑԱԶ՝ ԲՈՂՔ: Նախորդներուն պէս: — ՄԱՐԱՆԿԱՐՔ՝ անարժէք: — ԽՈՐԱՆՔ՝ չկան: — ԿԻՍՄԱՆՈՐԱՆՔ՝ անարժէք: — ԳԻՐԶ՝ Սարգիս վարդապետ: — ՄՍԵՅՈՂ՝ Շահամիր: — ԺԱՄԱՆԱԿ՝ ԶԼԶ (= 936 + 551 = 1487): — ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ՝ սեփականութիւն Ս. Աստուածածին եկեղեցւոյ ի Սեբաստիա:

Մատենան է Ա-Երբեք, էջ 11—217
Մատթէոս. էջ 221—347 Մարկոս. էջ 353—567
Լուկաս. էջ 571—730 Յովհաննէս:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. էջ 730. Բռն էրէն. «Փառք... Գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Սարգիս վարդապետի, ի թվականիս Հայոց ԶԼԶ ի յիշատակ բարի պարոն Հահամբին հոգւոյն եւ ծնաւդաց իւրոց հաւրն Բախթիարին եւ մաւրն Քուրանին եւ կնոջն Թուխթանայ, դստերն Գշևային, քուրջն Մարթային, արդ եւ Հահամիրս գնեցի զվարդապետի թիւ եւ զանուշահոտ ծաղկաւետ սուրբ աւետարանս ի վայելումն հոգւոյ իմոյ եւ ծնողաց իմոց եւ ամենայն արեան մերձաւորաց իմոց եւ եղի յիշատակ ի դուռն սուրբ Հրեշտակապետին. Աստուած զիւրեանց յիշատակն անջնջելի պահեցէ ամէն:

ԹՈՐԳՈՒՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՇԱԿԵԱՆ

(Շարունակելի.)

